*Հեղինակ՝ Էլիզա Քեռշկարյան*

**Ճանաչենք շրջապատող աշխարհը**

## Նպատակը՝

Նյութը կօգնի երեխային հասկանալ և գիտելիքներ ստանալ իրեն շրջապատող աշխարհի մասին, օրինակ՝ թե ինչի՞ համար են կիրառում հիգիենայի տարբեր պարագաները, հագուստի մասերը, ի՞նչ են դնում կենցաղային օգտագործման էլեկտրական սարքերի մեջ և ինչու՞, ի՞նչ նյութից են պատրաստված կենցաղային իրերը, ի՞նչ նպատակով են դրանք կիրառում և այլն:

## Անհրաժեշտ պարագաներ՝

Սոցիալ-կենցաղային տարբեր առարկաների նկարներ, քարտեր:

## Ընթացքը՝

Երեխային տրամադրել համապատասխան դիդակտիկ պարագաները և հարց ու պատասխանի միջոցով բացատրել առարկաների նշանակությունը, կիրառությունը, այնուհետև օգնել նրան մի քանի տարբերակներից ընտրել ճիշտ տարբերակը:

Այստեղ ներկայացված տարբերակները նմուշներ են, կարելի է դրանք ավելացնել, լրացնել և նոր տարբերակներ ստանալ:

**Օրինակ՝**

Մազերը սանրում ենք սանրի օգնությամբ, իսկ ատամներն ի՞նչ առարկայի միջոցով ենք մաքրում: Ներքևում եղած առարկաներից ընտրի՛ր ճիշտ տարբերակը:



Տղան գլխին դնում է գլխարկ, իսկ ոտքերին ի՞նչ է հագնում: Ընտրի՛ր ճիշտ տարբերակը:

Մթերքը դնում ենք սառնարանում, այն սնունդը թարմ է պահում: Իսկ լվացքի մեքենան ինչի՞ համար ենք կիրառում և ի՞նչ ենք դնում նրա մեջ: Ընտրի՛ր ճիշտ տարբերակը:

Սեղանը պատրաստում են փայտից, իսկ բաժակը ինչի՞ց են պատրաստում: Ընտրի՛ր ճիշտ տարբերակը:



Աթոռի վրա նստում ենք, իսկ մահճակալն ի՞նչ նպատակով ենք օգտագործում: Նշված գործողություններից ընտրի՛ր ճիշտ տարբերակը:



Մեքենան գնում է ճանապարհով, իսկ նավա՞կը...
Ընտրի՛ր ճիշտ տարբերակը:



Երեխայի հետ աշխատանքի ընթացքում կարող եք ավելի շատ տեղեկատվություն հաղորդել, ինչը կօգնի նրան շրջակա միջավայրի մասին առավել իրազեկված լինել, կհարստացնի նրա ճանաչողական գիտելիքներն ու կձևավորի նոր հմտություններ: